

ՊՈՐՏԱՅԻՆ ՃՈՂՎԱԾԵ


ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԻՆՉ Է ՊՈՐՏԱՅԻՆ ՃՈՂՎԱԾԵ

Պորտային ճողվածքը երեխաների շրջանում հաճախ հանդիպող խնդիրներից է, ավելի հաճախ է հանդիպում անհաս և մարմնի ցածր քաշով ծնված երեխաների մոտ: Սովորաբար ախտորոշվում է նորածնային շրջանում:

Պորտային ճողվածքը դրսևորվում է պորտի շրջանում դիտվող փափուկ արտափքվածությամբ, որն ավելի արտահայտված է դառնում երեխայի լացի, հազի, աղիների գործելու ժամանակ: Սովորաբար անցավ է, հեշտությամբ ներուղղվում է և անվտանգ է:



ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ

Պորտի շրջանում արտափքվածությունն նկատելու դեպքում պետք է դիմել բժշկի:




95% դեպքերում պորտային օղի դեֆեկտն ինքնալավանում է մինչև երեխայի 4-5 տարեկանը լրանալը:



ԻՆՉ ՀԻ ԿԱՐԵԼԻ ԱՆԵԼ

Հի կարելի օգտագործել ճնշող վիրակապեր, կաշուն ժապավեններ, հատուկ «պորտային ճողվածքի համար գոտիներ», մետաղադրամներ: Դրանք չեն նպաստում պորտային ճողվածքի լավացմանը, սակայն կարող են վնասել երեխայի մաշկը և բորբոքումների պատճառ դառնալ:



ԻՆՉ ԿՏԱՆԳՆԵՐ ԿԱՆ


Պորտային ճողվածքը հազվադեպ կարող է բարդանալ օղակումով: Օղակման ժամանակ ճողվածքապարկի պարունակությունը (աղեգալարը) այլևս չի ներուղղվում (հետ չի գնում դեպի որովայնի խոռոչ) և խանգարվում է դրա արյունամատակարարումն ու սնուցումը: Դա հանգեցնում է աղիքի օղակված հատվածի հյուսվածքի մեռուկացման: Օղակման ժամանակ՝

- ճողվածքը շատ ավելի արտահայտված և շոշափելիս ավելի կոշտ («քարացած») է դառնում,
- երեխան խիստ անհանգիստ է և ճողվածքին դիպելը ցավոտ է,
- ճողվածքի շրջանում մաշկը կարմրած է կամ սովորականից շատ ավելի մուգ գույնի:

Օղակման կասկածի դեպքում **անհապաղ** պետք է դիմել բժշկի:

ԵՐԲ Է ՊԵՏՔ ՎԻՐԱՅԱՏԵԼ
ՊՈՐՏԱՅԻՆ ՃՈՂՎԱԾԵ

- Պորտային ճողվածքը պետք է վիրահատել՝
- Եթե բարդացել՝ օղակվել է:
- Եթե այն չի անցել մինչև երեխայի 4-5 տարեկան դառնալը:



ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

